ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. **N ---- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 259-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 49-րդ կետից հետո լրացնել նոր 49.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«49.1. Սույն հավելվածի 13-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված գույքի (բացառությամբ՝ չկառուցապատված հողամասերի) ուղղակի վաճառքի դեպքում օտարման գինը որոշվում է գույքի շուկայական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան տվյալ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 259-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.**Խնդրի սահմանումը**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշվում են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:

2. **Առկա իրավիճակը**

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագիրը, որի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված են գույքի (բացառությամբ՝ չկառուցապատված հողամասերի) օտարման ձևերը, որոնցից է նաև ուղղակի վաճառքը:

Նույն ծրագրի 13-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գույքը (բացառությամբ՝ չկառուցապատված հողամասերի) ուղղակի վաճառքի ձևով օտարվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք վերջին 20 (քսան) տարվա ընթացքում տիրապետում և օգտագործում են Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող տվյալ Գույքը:

Նախագծով առաջարկվում է ծրագիրը լրացնել նոր 49.1-ին կետով՝ նախատեսելով, որ նույն հավելվածի 13-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված գույքի (բացառությամբ՝ չկառուցապատված հողամասերի) ուղղակի վաճառքի դեպքում օտարման գինը որոշվում է գույքի շուկայական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան տվյալ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը:

3.Կարգավորման նպատակը

Նախագծով նախատեսված դեպքերով ուղղակի վաճառքի եղանակով օտարման դեպքում հնարավորություն է տրվում վաճառքն իրականացնել գույքի շուկայական արժեքի

50 տոկոսի չափով, միաժամանակ նախատեսելով պայման, որ օտարման գինը չի կարող պակաս լինել տվյալ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքից:

4. **Ակնկալվող արդյունքը**

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու արդյունքում՝ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնք վերջին 20 (քսան) տարվա ընթացքում տիրապետում և օգտագործում են Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող տվյալ Գույքը, կստեղծվի այն ձեռքբերելու իրական հնարավորություն:

5.Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ